և 12 հազարաց նոցին, և լուեալ թէ տիրէ սով 'ի Պաղեստին, թողին զզօրսն առ Արգար արքայն Հայոց, եւ եկին 12 Իշխանօք և 1000 հեծելովք, Մելքոն, Գասպար և Պաղտասար, ըստ Վարդանայ, ոսկի, կնդրուկ և զմուռս բերեալ պատարագ։ Լուկիանոս ոմն Հռոմայեցի՝ գրեաց առ կայսրն Օգոստոս յԱսորեաց. «Գիտասցէ ինքնակալութիւնդ, զի եկին 'ի հարաւոյ յարեւելից արք մեծաշուքք, և երկրպագին տղայի միոյ ծնելոյ 'ի Պաղեստին, հրաման առեալ 'ի վերուստ յաստեղէ մեծէ, որ առաջնորդէր նոցա»։ Ընծայեցաւ քառասնօրեայ 'ի Տաճարն, արձակեալ զծերունին Սիմէոնն 'ի խաղաղութիւն։

Փախեաւ յեգիպտոս ընդ ծնողացն տղրեաւ 'ի մոլեգնութենէ Հերովդի, զի ծանեաւ զնա նախանձորդ թագաւորութեան իւրոյ եւ կամէր սպանանել։ Այլ իբրեւ խաբեցաւ 'ի Մոգուց անտի, եհեղ զցասումն սրտմտութեան իւրոյ 'ի տղայսն Բեթղեհէմի և յամենայն սահմանս նորա, և ետ կոտորել զնոսա յերկեմենից և 'ի խոնարհ, 1462 անձինս՝ ըստ Վարդանայ. կարծելով սպանանել զՓրկիչն 'ի նոսին։ Խնդրեաց և զՅովհաննէս՝ սէր և գտանիցի նա 'ի լեռնակողման. զի հռչակեալ էր անուն նորա ընդ ամենայն Հրէաստան՝ վասն սքանչելի ծննդեան նորա։ Աճապարեաց Եղիսաբեթ, առեալ զմանուկն փախեաւ 'ի լեառն, եւ 'ի պնդել արքունի խնդրակաց զհետ նորա, նոյն ժամայն պատառեցաւ վէմն, և առ ընկալաւ 'ի ներքս զմայրն և զմանուկն։ Եւ ապա հրեշտակ Տեառն եհան ըզնոսա 'ի վիմէն. Եղիսաբեթ գնաց 'ի տուն իւր, և մանուկն մնաց յանապատի սպասաւորեալ 'ի հրեշտակաց։

Եկեալ Եղիսաբեթի եդիտ զՋաքարիա նահատակեալ վասն ճշմարտութեան, զի սպանին զնա Հրեայք 'ի Տաճարին՝ (որք Մեսիայ առդնէին զՀերովդէս), վասն քարոզելոյ նորա զգալուստ ճշմարիտ Մեսիային, և թագուցանելոյ զորդի իւր։

Իսկ Հերովդէս ցասուցեալ արքային Հայոց Արգարու, սակս արհամարհանաց իւրոյ պատկերին, գումարէ զօրս 'ի վերայ նորա, և պատահեալ քաջացն Հայոց՝ անկանի 'ի մարտին եղբայր նորին Յովսէփ, և զօրքն ցրուին փախստական, եւ ինքն անկեալ յախտ դժնդակ՝ եռացին որ-